«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի սան Դավիթ Կարենի Մուրադյանի «Մշակութային տարբերությունները հուզական դրսևորումներում. հայեր» վերնագրով հետազոտական աշխատանքի գրախոսություն

Հետազոտական աշխատանքն աշակերտի կողմից կատարվել է բարեխղճորեն: Դ. Մուրադյանը ներկայացրել է աշխատանքը՝ բազմակողմանիորեն ուսումնասիրելով թեմային առնչվող հասկացությունները, եզրույթները: Աշակերտն օգտվել է ինչպես հայալեզու, այնպես էլ արևմտյան գիտական գրականությունից, վերլուծել մշակութային տարբերություններին վերաբերող տեսությունները:

Գովելի են Դ. Մուրադյանի հետազոտական հմտություններն ու վերլուծական կարողությունները: Աշակերտն աշխատանքի շրջանակներում փորձ է արել նաև ներկայացնելու հայ մշակույթին բնորոշ հուզական արտահայտման առանձնահատկությունները՝ իրականացրած հարցաթերթային հարցումների արդյունքների հիման վրա: Աշխատանքում արտացոլված են նաև հեղինակի ինքնուրույն մոտեցումները, ընկալումները, համեմատությունները: Թեև հետազոտության առկա են մեթոդաբանական որոշակի թերություններ՝ կապված հարցման ընտրանքի հստակեցման հետ, այնուամենայնիվ դրանք չեն ցածրացնում աշխատանքի որակը և լիովին բավարարում են դպրոցական հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

Աշխատանքն արժանի է բարձր գնահատականի:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

Սոցիալական գործընթացների և ինստիտուտների բաժնի ավագ լաբորանտ

Լուսինե Անգելուշ